# ԱԳՈՐԱ Լրատու

ԱՊՐԻԼ 26 - ՄԱՅԻՍ 5 2016 Թ. ԹԻՎ 10 (2098)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ


## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

## ԵՄ պատվիրակության ղեկավարը մեր հանրապետությունում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկուն: Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանում ԵՄ պատվիրակության արտաքին համագործակցության պատասխանատու Ջոն Բարքերը:

Ողջունելով հյուրերին՝ նախարար Սերգո Կարապետյանը բարձր է գնահատել ԵՄ-ի հետ համագործակցության ներկա մակարդակը: «Հայաստանի և Եվրամիության միջև, հատկապես՝ գյուղատնտեսության ոլորտում, վերջին տարիներին ձևավորվել են սերտ հարաբերություններ, հաջողությամբ իրականացվում են ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք հուսով եմ, կկրեն շարունակական բնույթ»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով Եվրամիության աջակցությամբ Հայաստանում իրականացված ծրագրերին, այդ թվում նաև՝ Եվրահանձնաժողովի Թայեքս և Թվինինգ գործիքներին (TAIEX, TWINNING)՝ նախարարն ընդգծել է, որ դրանք էապես նպաստել են Հայաստանում գյուղատնտեսության բնագավառի զարգացմանը: Որպես երկրի ագրարային ոլորտի առաջընթացի մեկ այլ կարևոր խթանիչ՝ նախարարը կարևորել է «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագիրը» (ENPARD), որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից՝ գյուղատնտեսության կայուն զարգացման, արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացման նպատակով և իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից:

Այնուհետև նախարարը համառոտ ներկայացրել է Հայաստանում գյուղատնտեսության ներկա վիճակը, մատնանշել այն ոլորտները, որոնցում ակնկալվում է հաջող և արդյունավետ համագործակցություն: Այս համատեքստում նախարարը նշել է մասնավորապես՝ ջերմոցային տնտեսությունների ստեղծման, ինտենսիվ պտղատու այգիների հիմնման, ոլորտում նորագույն տեխնոլոգիաների, այդ թվում՝ ոռոգման կաթիլային համակարգերի և հակակարկտային ցանցերի ներդրման կարևորությունը:

Որպես համագործակցության հեռանկարային ուղղություն՝ նախարար Ս. Կարապետյանը նշել է նաև օրգանական գյուղատնտեսությունը, որի զարգացման համար Հայաստանում ստեղծված են նպաստավոր պայմաններ: Դեսպան Պյոտր Սվիտալսկին իր հերթին գոհունակությամբ նշել է, որ Հայաստանի և Եվրամիության միջև ձևավորված հարաբերությունները վերջին շրջանում այնքան են սերտացել և ամրապնդվել, որ կարող են օրինակելի դառնալ այլ ոլորտների համար: Պյոտր Սվիտալսկին միաժամանակ ընդգծել է, որ հայկական բարձրորակ գյուղատնտեսական արտադրանքը կարող է մրցունակ լինել Եվրոպական Միության երկրներում ևս:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև ոլորտին վերաբերող այլ հարցեր:

## Համագործակցության նոր հեռանկարներ

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերին:**

Նշելով, որ երկու երկրների միջև Հայաստանի անկախացումից հետո գյուղատնտեսության բնագավառում ձևավորվել է փոխշահավետ համագործակցություն՝ նախարարը վստահություն է հայտնել, որ պարոն Քիսլերի առաքելության ընթացքում հայ-գերմանական հարաբերություններն ագրարային ոլորտում ավելի կխորանան ու կամրապնդվեն:«Հայաստանի անկախացումից հետո, Գերմանիայի հետ գյուղատնտեսության ոլորտում ձևավորվել է սերտ համագործակցություն: Այս առումով կցանկանայի հատկապես նշել Գերմանիայի համագործակցության կազմակերպության (GIZ) և Գերմանիայի զարգացման բանկի (KfW) աջակցությամբ, վերջին տարիներին իրականացվող ծրագրերը, որոնք մեծապես նպաստում են ոլորտի տարբեր ճյուղերի զարգացմանը», - ողջունելով հյուրին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

2

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**Գործադիրի որոշմամբ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Տավուշի մարզպետարանին կհատկացվի 8,935.5 հազար դրամ՝ սահմանամերձ Կոթի համայնքի բնակիչներին գարու և ցորենի ցանքատարածություններում բերքահավաք չիրականացնելու հետևանքով պատճառված վնասները փոխհատուցելու նպատակով:** Ըստ հիմնավորման՝ 2015թ. ամռանը Կոթի համայնքում արկակոծությունների պատճառով չհնձված հացահատիկի տարածքների (27.5 հա) կրած նյութական վնասը կազմել է 11 մլն 935,5 հազ. դրամ: Նշված գումարից 3 մլն դրամը 2015թ. տարեվերջին, օգնության կարգով, փոխհատուցել է ՀՀ պաշտպանության նախարարությունը. այն համամասնորեն բաժանվել է բոլոր սեփականատերերին:

***

**Արագածոտնի մարզի Թալինի հեղեղատարի քանդված հատվածների վերանորոգման և հունի մաքրման նպատակով, կառավարության պահուստային ֆոնդից գումար կհատկացվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին:** Ըստ հիմնավորման՝ 2014թ. օգոստոսի 8-ին ՀՀ վարչապետի Թալին քաղաքում գտնվելու ընթացքում, Թալինի քաղաքապետին տրված հանձնարարականի հիման վրա, վերջինիս կողմից պատվիրվել են Արագածոտնի մարզի Թալինի հեղեղատարի քանդված հատվածների վերանորոգման և հունի մաքրման նախագծանախահաշվային փաստաթղթերը: Հեղեղատարի քանդված հատվածների վերանորոգման և հունի մաքրման աշխատանքները կվերականգնեն Արագած սարից գարնանային ձնհալի ջրերի մուտքը դեպի քաղաք և կապահովեն հողերի մեծ մասի ոռոգումը, ինչպես նաև կլուծվի ամռան ամիսներին գյուղատնտեսական կենդանիների խմելու ջրի հարցը:

Գործադիրը հավանություն է տվել «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող և պահպանվող ջրային համակարգերը վարձակալությամբ փոխանցելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներին: Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի շահագործման արդյունավետության բարձրացման, Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնված ջրի առավել արդյունավետ օգտագործման, հետագա աշխատանքների բարելավման նպատակով, կառավարությունը հաստատել է Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողման, հաշվառման և Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի հիդրոտեխնիկական կառույցներով բաշխման պայմանները: Նախատեսվում է նաև մինչև 2016 թ. ոռոգման շրջանի ավարտը մշակել և ներկայացնել ծրագիր՝ դերիվացիոն ջրանցքների և դրանցից սնվող ոռոգման ջրանցքների գլխամասերում՝ ըստ պատկանելության ջրաչափական դիտակետերի կառուցման, դրանք ժամանակակից կատարելագործված ջրաչափական սարքավորումներով կահավորման, կենտրոնացված ավտոմատ կառավարման և տվյալների հեռահաղորդակցման համակարգի ներդրման վերաբերյալ:

***

**Հանրապետությունում մարտ ամսվա ընթացքում, արձանագրված բացասական ջերմաստիճանների արդյունքում, վնասներ են գրանցվել Արմավիրի և Արարատի մարզերում, որտեղ տուժել է ծիրանենու բերքը:** Տուժել են Արմավիրի մարզի համայնքների գյուղացիական տնտեսությունները: Արմավիրի և Էջմիածնի տարածաշրջաններում, Բաղրամյանի տարածաշրջանի առանձին համայնքներում բերքի կորուստը կազմել է 50-80 %, իսկ որոշ համայնքներում՝ նույնիսկ ավելին: Արարատի մարզի Արարատի տարածաշրջանում ծիրանի բերքի կորուստը գնահատվում է 20-40%, Արտաշատի տարածաշրջանում՝ 40-70 %, Մասիսի տարածաշրջանում՝ 40-50 %, իսկ «Զվարթնոց» օդանավակայանին հարակից առանձին համայնքներում, որտեղ ծիրանենին հիմնականում մշակվում է տնամերձ հողամասերում՝ 60-90%: Բերքի որոշակի կորուստներ կան նաև Վայոց ձորի մարզի 2-3 համայնքներում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքների ու հաշվարկների արդյունքում հանրապետությունում 2016 թվականին կանխատեսվում է 45-55 հազար տոննա ծիրանի բերք:

Ծիրանի ընթացիկ տարվա սպասվող բերքի վերաբերյալ առավել հստակ տեղեկություններ կտրվեն մայիսի երկրորդ տասնօրյակին:


Աշխատանքային այց Էջ 3

Արդյունավետ գյուղատնտեսություն Էջ 4

Մասնագետի խորհուրդը Էջ 7

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

# Համագործակցության նոր հեռանկարներ

1

Այս ենթատեքստում նախարարը հատկապես կարևորել է Գերմանիայի համագործակցության կազմակերպության կողմից անտառվերականգնման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև KfW բանկի կողմից Հայաստանում իրականացվող ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերը, այդ թվում՝ Կապսի և Մաստարայի ջրամբարների վերակառուցումը: Այնուհետև նախարարը համառոտ ներկայացրել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության բնագավառի ներկա վիճակը, ընդգծել, որ ոլորտի զարգացման գրավականը գյուղացիական տնտեսությունների միավորումը և կոոպերատիվների ստեղծումն է, իսկ այս առումով, Գերմանիայի փորձը Հայաստանի համար կարող է օրինակելի լինել: Նախարարը հույս է հայտնել, որ ագրարային բնագավառում Հայաստանի և Գերմանիայի փոխգործակցությունն առաջիկայում ավելի կխորանա և կընդլայնվի: Որպես երկկողմ համագործակցության հնարավոր ուղիներ՝ նախարարը, մասնավորապես՝ մատնանշել է գինեգործության, ձկնաբուծության ոլորտները, գյուղատնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների ներդրման, տեղում համատեղ ընկերությունների միջոցով ոռոգման կաթիլային համակարգերի և հակակարկտային ցանցերի արտադրության կազմակերպման հնարավորությունը:

Հանդիպման ավարտին կողմերը պատրաստակամություն են հայտնել ներդնել առավելագույն ջանքեր՝ ի նպաստ երկու պետությունների միջև ագրարային ոլորտում համագործակցության ընդլայնման:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Համաձայնագիրը՝ նոր հնարավորությունների մեկնարկ

**ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանն օրերս ընդունել է ՌԴ Վոլոգդայի նահանգից ժամանած պատվիրակությանը, որը գլխավորում էր մարզի առևտրատնտեսական զարգացման վարչության պետ Դիմիտրի Անտոնովը:**

Պատվիրակության կազմում էին՝ Վոլոգդայի «Սպառողների միություն» հասարակական կամակերպության նախագահ Ինա Ռեպինան, «Մակսի» առևտրական ցանցի կոմերցիոն տնօրեն Եվգենի Պագոդինը, «Հյուսիսային առևտրի տուն» ՍՊԸ-ի հիմնադիր Վյաչեսլավ Ցվետկովը, «Արսենալ Վին» ընկերության բաժնետեր Անատոլի Լոգունովը: Հանդիպմանը ներկա էին նաև փոխմարզպետներ Մովսես Քարտաշյանը, Գագիկ Գաբրիելյանը, մարզի արտադրական ձեռնարկությունների պատասխանատուները: Պատվիրակությունն Արմավիրի մարզում է՝ ապրիլի 7-ին ՀՀ կառավարությունում ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՌԴ Վոլոգդայի մարզի կառավարության միջև Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի և Վոլոգդայի նահանգապետ Օլեգ Կուվշինինիկովի կողմից

ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում:

Ողջունելով պատվիրակության այցն Արմավիրի մարզ՝ Ա. Ղահրամանյանը հույս է հայտնել, որ կողմերին կհաջողվի փոխշահավետ համագործակցություն սկսել՝ ի նպաստ ձևավորված հարաբերությունների ամրապնդման և զարգացման. «Այցելելով գյուղմթերքի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկություններ՝ հնարավորություն կունենաք տեղում ծանոթանալու հիմնական տեսականուն: Պայմանավորվածության ձեռք բերման դեպքում Արմավիրի արտադրողները կունենան արտահանման նոր շուկա, իսկ Վոլոգդայի բնակչությունը կօգտվի էկոլոգիապես մաքուր և համային բարձր հատկանիշներով գյուղմթերքի արտադրանքից»: Ամփոփելով իր խոսքը՝ մարզպետը նշել է, որ սա կողմերի միջև կնքված համագործակցության համաձայնագրին հաջորդող առաջին գործնական քայլն է, որի արդյունքներն իրենց երկար սպասեցնել չեն տա:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Վոլոգդայի առևտրատնտեսական զարգացման վարչության պետ Դիմիտրի Անտոնովը պատմել է նահանգի առևտրային և արտադրական հնարավորությունների մասին, որոնք, ըստ նրա, կարևոր պայման կհանդիսանան փոխգործակցության համար: Դ. Անտոնովը ներկայացրել է նաև Վոլոգդայում իրացման պահանջարկ ունեցող սննդամթերքների ցանկը և սպառման հնարավորությունները՝ կարևորելով կողմերի միջև ձևավորված հարաբերություններին գործնական բնույթ հաղորդելը: Այնուհետև պատվիրակության անդամները ծանոթացան մարզի արտադրական ձեռնարկությունների պատասխանատուների հետ, ինչպես նաև նրանց կողմից առաջարկվող տեսականուն, որին էլ հաջորդեց պատվիրակության այցը համապատասխան ձեռնարկություններ:

www. armavir.mtaes.am

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

# Սպասարկման նոր կենտրոն Արագածավանում

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում մասնակցել է Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը: Կենտրոնը հիմնադրվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակում:**



Բացմանը մասնակցում էին ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդը, Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն Լևոն Մնացականյանը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գագիկ Խաչատրյանը և այլ հյուրեր:

Մասնագիտացված կենտրոնն ուղղված է Հայաստանում անասնապահության ոլորտի զարգացմանը և նպաստելու է առաջադեմ տեխնոլոգիաների և ֆերմերային գործարարության զարգացման փորձի առաջխաղացմանը: «Այսօր մենք ներկա ենք հանրապետությունում թվով 14-րդ գյուղատնտեսական ծառայությունների մատուցման կենտրոնի բացմանը: Մինչև 2020 թվականը նախատեսվում է բոլոր մարզերում ստեղծել 2-3 նմանատիպ կենտրոններ, որոնք կնպաստեն անասնապահության զարգացմանը, մասնավորապես՝ անասնագլխաքանակի ավելացմանն ու մթերատվության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի գյուղացիների եկամուտների ավելացմանը»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով անասնապահության ոլորտում մարզում իրականացվող մեկ այլ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» (CARMAC) ընթացքին՝ նախարարը տեղեկացրել է, որ ներկայումս ծրագրում ընդգրկված է ընդհանուր թվով 138 համայնք, որից 17-ը՝ Արագածոտնի մարզից: Միաժամանակ նախարարը գոհունակությամբ նշել է, որ ծրագրի իրականացման արդյունքում մարզում արձանագրվել է անասնագլխաքանակի աճ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացել է 2.5, մանր եղջերավոր կենդանիներինը՝ 7, իսկ խոզերի գլխաքանակը՝ 33 տոկոսով:

Իր հերթին տիկին Հիլիարդն ընդգծել է ԱՄՆ և ՀՀ միջև գյուղատնտեսության ոլորտի երկարատև գործակցության կարևորությունը: «Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի բնակչության 40 տոկոսն ապրում է գյուղական համայնքներում, որտեղ զբաղվածության հիմնական մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը՝ մենք Հայաստանի մեր գործընկերների հետ աշխատում ենք գյուղական համայնքներում գործարարությունը զարգացնելու, առևտուրը և շուկաների հասանելությունը դյուրացնելու և տեղական գործարարների տեղական մակարդակում գործընկերությունը զարգացնելու և կայուն արդյունքներ ապահովելու հարցում»,- նշել է նա:

Նորաբաց կենտրոնը տեղի գյուղացիական տնտեսություններին տրամադրելու է ծառայությունների ամբողջական փաթեթներ, կապեր է ստեղծելու գյուղատնտեսների և միջազգային ընկերությունների միջև: Այն հագեցած է լինելու արհեստական սերմնավորման և անասնաբուժական ժամանակակից սարքավորումներով և գործիքներով: Կենտրոնն էական դեր է խաղալու շուկայական կապերի հաստատման գործում, ինչպես նաև հասանելի է դարձնելու ֆինանսական ռեսուրսները տեղի ֆերմերների և ՓՄՁ-ների համար: Կենտրոնը համագործակցելու է շրջակա համայնքների անասնաբույժների հետ: Այստեղ կազմակերպվելու են Հայաստանի և օտարերկրյա մասնագետների կողմից անցկացվող սեմինարներ և դասընթացներ: Ակնկալվում է, որ կենտրոնի ծառայություններից կօգտվեն Արագածոտնի մարզի 10 համայնքների շուրջ 2,500 գյուղատնտեսներ:

## Ուսուցում

# Գյուղատնտեսության գծով խորհրդատուների համար

**Օրերս Արարատի ԳԱՄԿ-ում տեղի ունեցավ ուսուցողական դասընթաց՝ գյուղատնտեսության գծով խորհրդատուների համար, որը կազմակերպվել էր Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը:**

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱՀԿ-ի փոխտնօրեն՝ Ա. Հայրապետյանը, ով ներկայացրեց կազմակերպված ուսուցողական դասընթացի նպատակը՝ կարևորությունն ու արդյունավետությունը:

«Ինչպես չափել ոռոգվող դաշտին տրվող ջուրը», «Գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածություններում ոռոգման արդյունավետ մեթոդների և ագրոկանոնների կիրառումը» թեմաներով հանդես եկավ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԱԱՀ Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի դեկան՝ Գուրգեն Եղիազարյանը: «Ֆիլոքսերան, տարածման պատմությունն ու ներկայիս վիճակը Հայաստանում» թեմայով ներկայացրեց գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, ՀԱԱՀ Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ Արմենակ Տեր-Գրիգորյանը:

Ամփոփելով հանդիպումը՝ Արարատի ԳԱՄԿ-ի տնօրեն Գ. Գալստյանը մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին՝ կարևորելով հանդիպման անհրաժեշտության և շարունակականության մասին: Ուսուցմանը մասնակից ԳԱՄԿ-ի գյուղատնտեսության գծով խորհրդատուներին բաժանվեցին ներկայացված թեմաների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ՝ մշակված ԳԱՀԿ-ի կողմից:

Ուսուցման վերջում տեղի ունեցան ակտիվ քննարկումներ՝ ներկայացված թեմաների շուրջ, իսկ մասնակիցներին հուզող հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

*Արարատի ԳԱՄԿ*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ՝ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ

***ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հերթական աշխատանքային այցն է կատարել Շիրակի մարզ:***

Մարզպետարանում հրավիրված խորհրդակցության ընթացքում, համայնքների ղեկավարների և ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչների հետ քննարկվել են գարնան գյուղատնտեսական աշխատանքներին առնչվող ընթացիկ հարցեր: Խորհրդակցությանը մասնակցում էին Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը, Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գագիկ Խաչատրյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը, պաշտոնատար այլ անձինք: «Շիրակի մարզը 2015 թվականին գյուղատնտեսության ոլորտում արձանագրել է բավականաչափ բարձր ցուցանիշներ, և հանրապետությունում այս առումով լավագույններից է: Հատկանշական է առաջընթացը վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացման, միջին բերքատվության ավելացման առումով: Նախորդ տարի մարզում 3750 հա ավել հող է մշակվել, և վարելահողերի օգտագործման մակարդակը կազմել է շուրջ 86 տոկոս, ինչը նույնիսկ ավելի բարձր է հանրապետական միջին ցուցանիշից: Անասնապահության ոլորտում գրանցված արդյունքները նույնպես գոհացուցիչ են», – նշել է Սերգո Կարապետյանը: Նախարարի խոսքով՝ հացահատիկային մշակաբույսերի արտադրության առումով, ավանդաբար առաջատար համարվող մարզը վերջին տարիներին մշտապես բերքատվության բարձր ցուցանիշներ է ապահովում: Այսպես՝ 2015 թվականին այստեղ ցորենի բերքատվությունը կազմել է 34,9 ց/հա, 7 տոկոսով ավելացել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները և 28 տոկոսով՝ համախառն բերքը: Նախարարը լիահույս է, որ դրական դինամիկան առաջիկա տարիներին կպահպանվի, քանի որ 1000 հա ավել աշնանացան է կատարվել՝ նախորդ տարվա համեմատ: Մարզը կարևոր դերակատարում ունի սերմնաբուծության և կարտոֆիլագործության զարգացման առումով, որտեղ նույնպես առկա են բարձր արդյունքներ:

Նախարարը հավելել է, որ վերջին տարիներին, բացի Գյումրու սելեկցիոն կայանից, որը պետական հաստատություն է և սահմանափակ ռեսուրսներ ունի, ԳՆ համագործակցություն է ծավալում նաև մասնավոր տնտեսությունների հետ: Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակում, հանրապետությունում սերմարտադրությունը զարգացնելու նպատակով, արտերկրից ներկրվել են էլիտա և սուպերէլիտա դասի սերմացու, որը վերարտադրություն կազմակերպելու նպատակով, տրամադրվել այդ տնտեսություններին, ինչը դրական արդյունքներ է ապահովել:

Ս. Կարապետյանն անդրադարձել է նաև «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքներին: Ըստ այդմ՝ ծրագրի առաջին փուլում մարզում նախատեսված 8 համայնքների փոխարեն խնայողությունների հաշվին լրացուցիչ աշխատանքներ են կատարվել ևս 8 համայնքում: Կառուցվել է 68 կմ ջրագիծ և 48 խմոց, արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 87 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 19 անիվավոր տրակտոր: Երկրորդ ծրագրում ընդգծված են 4 համայնքներ, սակայն, նախարարի հավաստմամբ, դրանց քանակը կրկնապատկելու և նույնիսկ եռապատկելու հնարավորություն կա: Ընդգծելով կոոպերատիվների դերն ու նշանակությունը՝ նախարարը տեղեկացրել է, որ 2015 թվականի վերջին ընդունվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, որով իրավական հիմքեր են ստեղծվել երկրում կոոպերացիայի զարգացման համար: «Մեր առջև խնդիր ենք դրել խթանել հանրապետությունում կոոպերատիվների շարժումը, ինչը կավելացնի գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կհեշտացի աշխատանքները, այս ուղղությամբ նաև միջազգային կազմակերպությունների հետ ենք համագործակցության ծրագրեր իրականացնում: Նախատեսում ենք ընթացիկ տարում ստեղծել թվով 45 գյուղացիական կոոպերատիվներ, որոնց մի մասը՝ Շիրակի մարզում»,- նշել է Ս. Կարապետյանը: Խորհրդակցության ընթացքում նախարարը պատասխանել է նաև ֆերմերների կողմից բարձրացված գյուղատնտեսության ոլորտին վերաբերող մի շարք հարցերի:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, ՀՀ գյուղատնտեսության նախարարի ոսկե մեդալով են պարգևատրվել Հոռոմ և Բենիամին համայնքների ֆերմերներ Սեդրակ Գասպարյանը և Անդրանիկ Խաչատրյանը, իսկ մի խումբ գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ արժանացել են շնորհակալագրերի: Այնուհետև նախարարն ուղևորվել է «Բանդիվան կաթ» ՍՊԸ, ծանոթացել ընկերության ընթացիկ գործունեությանը: Ընկերությունը զբաղվում է պանրի և այլ կաթնամթերքի արտադրությամբ, իրացումը կազմակերպվում է ներքին շուկայում: Ընկերության սեփականատեր Դավիթ Կարապետյանի խոսքով՝ նախատեսում են ընթացիկ տարում շուրջ 30 տոկոսով ավելացնել սեփական արտադրանքի ծավալները: Ընկերությունը տոհմային երինջների ներկրման պետական ծրագրի շահառուներից է: ՀՀ գյուղատնտեսության նախարարության օժանդակությամբ, Հոլանդիայից ձեռք են բերել 92 գլուխ հոլշտին և շվից ցեղատեսակի երինջներ: Ծրագրից գոհ են, կենդանիները բարձր կաթնատվություն են ապահովում՝ մեկ կովը տարեկան 6000 լիտր կաթ է տալիս, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ 10, 000 լիտր: Այս պահին մթերվող կաթի շուրջ 60 տոկոսն ապահովում են սեփական արտադրանքի հաշվին:

Նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ ծրագրի շրջանակում տարեկան 200-400 գլուխ բարձր մթերատու կենդանիներ են ներկրվում հանրապետություն, ինչը բարձր արդյունքներ է ապահովում և հնարավորություն է տալիս տեղում կազմակերպել կենդանիների վերարտադրությունը: Նախարարը Շիրակի մարզի անասնապահությամբ զբաղվողների համար ևս մեկ կարևոր լուր է հայտնել՝ եկող տարի մարզում ժամանակակից սպանդանոց կկառուցվի:

ԾՐԱԳԻՐ

# ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

**Հայաստանի սահմանամերձ ու հեռավոր բնակավայրերում ապրող հողագործի կյանքը հեշտ չի տրվում և լեցուն է բազմաթիվ առօրյական խնդիրներով: Հայրենի եզերքն այս կողմից շենացնող ու ընտանիքի բարեկեցությունը հոգացող գյուղացին ապավինում է պետության սահմանն օրուգիշեր հսկող զինվորին ու միևնույն ժամանակ, ամուր թիկունք ապահովում վերջինի համար:**

Ղարաբաղա-ադրբեջանական սահմանի արևելյան գոտու երկայնքով ընթացող ողբերգական բախումների նախօրեին «Էյ Թի Փի»-ն Երևանից մոտ 130 կմ հեռավորության վրա գտնվող Աղավնավանք գյուղում էր՝ Տավուշի մարզում: Գյուղը գտնվում է Գետիկ գետի հովտում, որտեղ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը («Հայաստան Ծառատունկ ծրագիր») փոքր ձեռնարկություններին խթանելու նպատակով, 2004 թ.-ին մեկնարկել է Տնամերձ տնկարանների ծրագիրը:

Վերջին տարիներին «Էյ Թի Փի»-ի այս ծրագիրն իր ջանքերը կենտրոնացրել է մի քանի համայնքներում, այդ թվում՝ Աղավնավանքում, որտեղ մի շարք ընտանիքներ, բավականին հմտացել են ծառի խնամքի գործում: Ծրագրի միջոցով տեղացիները սովորում են իրենց տնամերձ հողակտորներում տնկիներ բազմացնելու ճշգրիտ եղանակները, որից հետո «Էյ Թի Փի»-ն շահավետ պայմաններով, գյուղացուց գնում է անհատույց տրամադրված այդ ծառերը՝ հարակից անտառներում վերատնկելու նպատակով: «Ծրագրի գրավչությունը հենց նրանում է, որ այս ընտանիքները վճարվում են լավ կատարված աշխատանքի՝ ծառերը ճիշտ խնամելու և աճեցնելու համար»,- նշում է «Էյ Թի Փի»-ի «Համայնքային ծառատունկ» ծրագրի ղեկավար Արթուր Հարությունյանը, ով, նաև համակարգում է Տնամերձ տնկարանների ծրագիրը: «Ավելին, Եվրախորհրդարանի կողմից արժանացել ենք «Համաշխարհային էլեկտրախնայողություն՝ հանուն կայունության» մրցանակին, որը հիմնվել է կայունություն ապահովող 3 ասպեկտների, այն է՝ մարդու, եկամտի և մոլորակի վրա՝ մեր ծրագրի դրական ազդեցության վրա»:

Տնամերձ տնկարանների ծրագիրը գործում է նաև Շիրակի և Գեղարքունիքի մարզերում: Քեթի գյուղի 6 ընտանիքներ արդեն երկու տարուց ծառեր կվաճառեն «Էյ Թի Փի»-ին, իսկ լեռնային Ճամբարակի ևս 4 ընտանիքներ մի քանի տարի է, ինչ ծրագրի շահառուներ են: Այս գյուղն առանձնանում է իր յուրահատուկ կլիմայով. ծովի մակերևույթից շուրջ 2000 մետր բարձրության վրա բույսերի վեգետացիան ավելի ուշ է սկսվում, ինչը հնարավորություն է ընձեռում այս տնամերձերից գնված և շրջանի բնակլիմայական պայմաններին համապատասխան ծառերը վերատնկել հարակից բարձրադիր համայնքներում, երբ հարավային բնակավայրերում ծառատունկի շրջանն արդեն ավարտված է լինում: «Տնամերձ տնկարանների ծրագիրը ծառայում է մի քանի նպատակների»,- նշում է Ա. Հարությունյանը՝ հավելելով, որ այսպիսով հնարավորություն է ստեղծվում տարբեր կլիմայական գոտիներում գտնվող համանքներին տարատեսակ տնկիներ մատակարել, մարդկանց սովորեցնել ծառ տնկել ու խնամքի առավել արդյունավետ եղանակներ և վերջապես, վճարել նրանց՝ նորատունկ անտառների համար նախատեսված որակյալ տնկիներ աճեցնելու դիմաց: Այս ծրագրի շնորհիվ աշխատատեղեր են ստեղծվել Աղավնավանքի 5 տնային տնտեսությունների համար, ինչը շարունակում է մնալ որպես կայուն եկամտի աղբյուր այդ ընտանիքների համար: Ի դեպ, աղավնավանքցիների գրեթե 80% Բաքվից այստեղ է վերաբնակեցվել 1990-ականներին: «Մենք Աղավնավանք ենք տեղափոխվել Բաքվի ջարդերից հետո»,- պատմում է գյուղի բնակիչ Կամո Միրզոյանը՝ նշելով այս չքնաղ համայնքում կյանքն առանձնահատուկ դարձնող և հայրենի հողում իրեն պահող մի քանի հանգամանք: «Դրանց մեկն էլ «Էյ Թի Փի»-ի տրամադրած կայուն եկամուտն է, որի շնորհիվ կարողացել եմ վերանորոգել տունս: Մտածում եմ մի հատվածում հյուրատուն կառուցել, որտեղ կհանգրվանեն գյուղ այցելող բազմաթիվ զբոսաշրջիկներ»,- իր հետագա անելիքներով է կիսվում Կամոն: «Աղավնավանքի 6 ընտանիքներն այժմ աճեցնում են ավելի քան 3500 ծառ: Մեր նպատակն է՝ ընդլայնել այս ծրագիրը, ուստի փորձում ենք ներգրավել ու վերապատրաստել նոր ընտանիքների: Ղարաբաղյան քառօրյա պատերազմը եկավ ևս մեկ անգամ ապացուցելու, որ հայրենի եզերքը պահող զինվորն առավել ամուր է, երբ վստահ է, որ թիկունքում են կանգնած գյուղացին ու ժողովուրդը, որ շարունակում են ապրել ու արարել՝ ի հեճուկս թշնամու ոտնձգությունների: Մենք հպարտ ենք, որ «Էյ Թի Փի»-ն կարողանում է որոշակի դերակատարում ունենալ հեռավոր և սահմանամերձ համայնքների զարգացման գործում, իսկ մենք շարունակաբար ամրապնդելու ենք մեր աշխատանքներն այս ոլորտում», - նշում է Ա. Հարությունյանը:

*Քրիստինե Հովսեփյան*
*www.ecolur.org*

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԴՅՈՒՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԸ ՊԵՏՔ Է ԵՆԹԱՐԿՎԻ ՀԱՄԱԼԻՐ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ

***ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված ծրագրով, «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնագետները, կատարում են հանրապետության ողջ տարածքի գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական հետազոտություններ: Հողում սակա սննդատարրերի քանակությունը ճշտելու նպատակով, կազմակերպությանը դիմում են նաև ջերմոցային տնտեսությունների ներկայացուցիչները: Ներկայացնում ենք մեր աշխատակցի հարցազրույցը ՊՈԱԿ-ի տնօրեն Վաչագան Դավթյանի հետ:***

*-Պրն Դավթյան, հետազոտության արդյունքներն ստանալուց հետո հետագայում ի՞նչ աշխատանքներ են տարվում, ի՞նչ են տալիս այդ հետազոտությունները ջերմոցային տնտեսություններին:*

-Մեր կողմից հողօգտագործողներին տրվում են հանձնարարականներ, թե ի՞նչ անել, որպեսզի հողում պահպանվի սննդատարրերի հավասարակշռությունը: Երբեմն մեծ քանակությամբ միակողմանի հանքային պարարտանյութ օգտագործելով՝ հողում մեծանում է թթվային ռեակցիան, բարձրանում՝ թթվայնությունը, որի հետևանքով այն սկսում է աղակալել: Այդպիսով, մշակաբույսերի համար ստեղծվում են ոչ նպաստավոր պայմաններ: Որպեսզի նման խնդիրներ չառաջանան, մենք տալիս ենք մասնագիտական խորհուրդներ: Եվ եթե նախկինում ջերմատան հողն անհրաժեշտ էր փոխել 2-3 տարին մեկ, ապա այսօր այն փոխելու անհրաժեշտություն չկա: Պարզապես պետք է պահպանել պարարտացման չափաբաժինները, ժամկետները, և ամենակարևորը՝ խուսափել միակողմանի պարարտացումից: Մեր հողօգտագործողները հիմնականում շատ մեծ տեղ են տալիս ազոտական պարարտանյութերին՝ համարելով, որ դա է հիմնական անհրաժեշտ սննդատարրը, որը հարկավոր է բույսին: Մինչդեռ, բույսին անհրաժեշտ են որքան ազոտական, նույնքան էլ՝ կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր:

*-Ինչպե՞ս են մարզերում ընթանում աշխատանքները:*

-Շուրջ 2 ամիս է, ՀՀ գյուղատնտեսության նախարարի հանձնարարականով, ՊՈԱԿ-ի մասնագետների հետ միասին հանրապետության բոլոր համայնքներում: Հիմնական հարցադրումները, որոնք ներկայացվում են ֆերմերների կողմից, վերաբերում են պարարտանյութերի որակին: Վստահաբար կարող եմ ասել, որ հանրապետություն ներկրվող սուբսիդավորված ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի որակը գտնվում է նախարարի վերահսկողության ներքո. բոլորը համապատասխանում են իրենց մակնշմանը, այսինքն՝ որակյալ պարարտանյութեր են: Ոմանք կարծում են, որ վրացական ազոտական պարարտանյութի որակը կարող է ցածր լինել, պարսկականը՝ բարձր, իսկ ռուսականը՝ ամենաորակյալը: Ես վստահաբար կարող եմ ասել, որ հանրապետություն ներկրվող բոլոր պարարտանյութերն ունեն բարձր որակ: Բացի այդ, մենք աշխատում ենք նաև խոշոր հողատարածքներ ունեցող անհատ ֆերմերների (ձեռներեցների) հետ: Վերջին տարիներին, առանց հողի որակական հատկանիշների լուրջ ուսումնասիրության, մեր ֆերմերները ոչ մի մշակաբույս չեն մշակում: Սա խոսում է այն մասին, որ վերջին մի քանի տարիներին գյուղատնտեսական մշակաբույսերի ճիշտ պարարտացման և ամենակարևորը՝ համալիր պարարտացման միջոցով բարձրացել է ինչպես հողերի բերրիությունը, այնպես էլ՝ մշակաբույսերի բերքատվությունը: Խոսքը վերաբերում է նաև ջերմոցային տնտեսություններին: Մեզ մոտ վերջին տարիներին հողը սկսել են ուսումնասիրել հիմնականում Արտաշատի, Էջմիածնի, Մասիսի տարածաշրջանների ջերմոցային տնտեսություններով զբաղվողները: Որոշ ջերմոցային տնտեսություններից ամեն տարի հողը ներկայացնում են մեզ մոտ հետազոտման՝ նույնիսկ չփոխելով մշակաբույսերը: Նրանք էլ արդեն նկատել են, որ հողի բերրիությունը սկսել է բարձրանալ, միաժամանակ մեծանում է բույսերի դիմադրողականությունը իվանդությունների և վնասատուների նկատմամբ, քանի որ այն ապահովված է երեք հիմնական սննդատարրերով: Սովորաբար մեծանում է նաև այդ բույսերի ցրտադիմացկունությունը: Բոլոր համայնքներ կատարվող այցերի ժամանակ մենք սպառիչ պատասխաններ ենք տալիս հողօգտագործողներին հուզող հարցերին: Դրանք հիմնականում վերաբերում են ոռոգման, պարարտացման, մշակության, պայքարի միջոցառումներին և այլն:

*-Պրն Դավթյան, հողի անալիզի պատկերն ունենալուց հետո, Ձեր մասնագետներն ուղղությո՞ն տալիս են հողօգտագործողներին, օրինակ, ի՞նչ մշակաբույս կարելի է ցանել՝ ելնելով իրավիճակից:*

-Միանշանակ, այո՛, ծրագրով նախատեսված համայնքներին մենք տալիս ենք ցանքաշրջանառության սխեման, թե ի՞նչ մշակաբույսեր կարելի է մշակել: Ճիշտ է, հիմա դժվարություններ կան, քանի որ հողերը մասնատված են: Կիրառում ենք հինգդաշտյա ցանքաշրջանառություն, խոսքը վերաբերում է Արարատյան հարթավայրին (այսինքն՝ նույն մշակաբույսը տվյալ հողում ցանքի տակ է դրվում 5 տարին մեկ), նախալեռնային գոտիներում կիրառում ենք երկդաշտյա ցանքաշրջանառություն, քանի որ այնտեղ մշակաբույսերի քիչ տեսականի է (հիմնականում կարտոֆիլ և հացահատիկ) ցանվում, որոնք փոխարինում են մեկը մյուսին: Տրամադրում ենք նաև պարարտացման նորմաները՝ ըստ մշակաբույսերի, քանի որ յուրաքանչյուր մշակաբույս յուրահատուկ պահանջ ունի սննդատարրերի նկատմամբ:

Հողօգտագործողներին հատուկ ցուցումներ ենք տալիս իրենց ընտրած մշակաբույսի մշակության վերաբերյալ: Սակայն ամենակարևորը պարարտացման ժամկետներն են, որոնց վերաբերյալ նույնպես մենք մանրամասն տեղեկություններ ենք տալիս: Բոլոր մարզերում ունենք մասնագետներ, ովքեր կատարում են ագրոքիմիական հետազոտություններ, այնուհետև՝ նմուշառումներ որոնք արդեն ենթակա են հետազոտման: Ապա փորձաքննության արդյունքներից ելնելով՝ նրանց տալիս ենք համապատասխան տեղեկանք:

*-Որքա՞ն է մեկ անալիզի տևողությունը: Այդ աշխատանքների հետագա հսկողությունն ու՞մ վրա է դրված:*

-Ջերմատան հողի հետազոտումը տևում է առնվազն երկու, իսկ բաց դաշտի հողինը՝ երեք օր: Ինչ վերաբերում է հսկողությանը, ապա հիմնականում սահմանված չէ հատուկ հսկողություն: Մեզանից բացի, երբեմն ստուգող կազմակերպությունները վերցնելով սխեման կամ ագրոքիմիական քարտեզը՝ շրջում են այն համայնքներում, որտեղ տվյալ տարում կատարվել են աշխատանքներ: Ագրոքիմիկոսի աշխատանքի ավարտից հետո, համայնքի ղեկավարը կնքում է կատարողական ակտ: Ագրոքիմիական քարտեզը և բնութագրերը հանձնելուց հետո, ստորագրվում է ընդունման ակտը: Մեկ օրինակը պահվում է մեր ՊՈԱԿ-ում: Պահանջում ենք բոլոր համայնքապետերից, որպեսզի ագրոքիմիական քարտեզը փակցնեն գյուղապետարանի տեսանելի տեղում, որպեսզի ցանկացած հողօգտագործողի համար տեսանելի լինի իր հողակտորի վիճակը և որոշի հետագա քայլերը:




*-Հողօգտագործողները մի՞շտ են հետևում Ձեր հրահանգներին:*

-Թեև բոլոր հողօգտագործողները գիտեն, որ պարարտացումն անհրաժեշտ է, սակայն շատ հաճախ պատճառաբանելով, որ չունեն ֆինանսական միջոցներ՝ ոչինչ չեն ձեռնարկում: Մինչդեռ մեկ հա-ի համար երեք տեսակի պարարտանյութ ձեռք բերելու նպատակով, առավելագույնը ծախսվում է շուրջ 100 հազար դրամ, սակայն առնվազն 300 հազար դրամի եկամուտ է ստացվում: Օրինակ՝ Արարատյան հարթավայրում, առանց պարարտացման հացահատիկ մշակելու պարագայում, լավագույն դեպքում, հա-ից ստացվում է մինչև 30 g բերք: Իսկ եթե ներդրումներ կատարվեն պարարտացման համար, ապա հա-ից կստացվի առնվազն 60 g բերք: Նախորդ տարի Մասիսի տարածաշրջանի Դարակերտ համայնքում, ֆերմերը, ներդրումներից հետո, հա-ից ստացել է 100 g հացահատիկ: Հողը ենթարկվել էր անալիզի, և ֆերմերի համար արդեն պարզ էր՝ ի՞նչ քանակությամբ և ո՞ր սննդատարրը հող մտցնել: Արարատյան հարթավայրում հեկտարից 60 g ցանկացած դեպքում կարելի է ստանալ՝ պարարտացման համար համապատասխան ներդրում կատարելու դեպքում: Պատճառաբանությունների մի մասն օբյեկտիվ է, մի մասը՝ սուբյեկտիվ: Համոզված եմ, 1-2 տարի հետո ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի պահանջարկը կրկնակի մեծանալու է: Կարելի է մասնագիտական վերլուծություններ կատարել: Օրինակ, պարարտացման արդյունքում, խաղողի որակական հատկանիշների բարելավվելուց բացի, ավելանում է ողկույզի քաշը: Իսկ միայն ազոտական պարարտանյութով սնուցված խաղողի թե՛ արտաքին տեսքը, թե՛ շաքարայնության մակարդակը, և թե՛ պահպանության տեսակետից՝ դիմադրողականությունը, ցածր են: Այն հողօգտագործողները, ովքեր 2014 թ.-ին օգտագործել են ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր՝ նկատելով առավելությունը՝ հաջորդ տարիներին ավելացնում են ծավալը:

*-Փաստորեն, ստացվում է, որ այսօր հողի մշակության մշակույթը բարձրացնելու խնդիր ունենք: Որպես մասնագետ՝ ի՞նչ կհորդորեիք հողօգտագործողներին:*

-Կառավարությունը բոլոր պայմանները ստեղծել է գյուղացու կողքին կանգնելու, նրան աջակցելու համար: Այսօր հողագործը պետք է ընդօրինակի լավագույն տնտեսությանը, որը ներդրում է կատարել: Ի վերջո, հողօգտագործողները պետք է ընդունեն, որ գյուղատնտեսությունը գիտություն է, և պետք է մասնագիտական մոտեցում ցուցաբերել: Բոլոր պարարտանյութերն իրենց օգտագործման ժամկետներն ու եղանակներն ունեն: Այդ ուղղությամբ մենք տալիս ենք խորհուրդներ: Ես այն կարծիքին եմ, որ ցանկացած մշակաբույս հանքային պարարտանյութերով պարարտացնելու պարագայում, կարող ենք ստանալ մարդու համար ոչ վնասակար սնունդ, դրա մեջ նիտրատների մնացորդային քանակությունը պահպանելով նորմայի սահմաններում: Ես դա նույնպես համարում եմ մաքուր գյուղատնտեսական մթերք: Աշխարհում ամենաշատ հանքային պարարտանյութեր օգտագործվում են Գերմանիայում, սակայն բնապահպանորեն ամենամաքուր սննդամթերն արտադրվում է հենց այդ երկրում, քանի որ պահպանվում են պարարտանյութերի օգտագործման ժամկետներն ու չափաբաժինները: Հիմա հանրապետությունում սկսել են հիմնել ինտենսիվ այգիներ, որտեղ ներդրվում է ոռոգման կաթիլային համակարգ: Այն հնարավորություն է տալիս հեշտությամբ օգտագործել հանքային պարարտանյութերը: Բացի այդ, նաև արդյունավետ է, քանի որ պակասում են նորմաները (յուրաքանչյուր բույսին կամ ծառին տալիս են իրեն անհրաժեշտ քանակությամբ սննդատարրեր): Եթե ֆերմերը ցանկանում է եկամուտ ստանալ և արդյունք ունենալ, ապա պետք է առանց հապաղելու հետևի մասնագետների խորհուրդներին: Ջերմոցային տնտեսություններն առանց համալիր պարարտացման, չեն կարող բարձր բերք ստանալ: Նրանք փոքր տարածքի վրա մեծ ծախսեր են կատարում, բնականաբար, մեծ եկամուտներ են ստանում, որը փակում է իրենց ծախսերը: Եթե ամեն տարի հող չմտցնենք անհրաժեշտ սննդատարրերը, բնականաբար խախտվում է հավասարակշռությունը, ընկնում է հողի բերրիությունը, նվազում բերքատվությունը: Արևի, հողի և ջրի խնդիր չունենք, կարևորը ինտենսիվ գյուղատնտեսություն ճիշտ վարենք, որի համար կառավարությունը ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները:

***Հարցազրույցը՝***
***Նելլի Սահակյանի***

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 26 - մայիս 5, 2016 թ.
թիվ 10 (2098)

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԳՈՐԾԱՐԱՐ ԿԻՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ԽՄՈՐԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆԸ

***Հասմիկ Հովհաննիսյանը Գյումրիում զբաղվում է բարձրորակ խմորեղենի արտադրությամբ: Նա աշխատում է իր արտադրանքը ներկայացնել հաճախորդի աչքի համար տեսանելի վայրում, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանող տարածքում:***

Հասմիկի պատրաստած La Boulangerie Bisous ապրանքանիշի խմորեղենն արտադրվում է ֆրանսիական բաղադրատոմսերով, իսկ հումքը եվրոպական է, ձեռք է բերում ներկրողներից: Տեսականին բազմազան է՝ կրեմով, առանց կրեմի, շերտավոր կրուասաններ, ֆրանսիական հացաբուլկեղենի լայն տեսականի: Կազմակերպությունն ընդունում է նաև տորթերի պատվերներ:

Հասմիկ Հովհաննիսյանի կողքին կայացման ճանապարհին եղել և օժանդակել է «Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ»-ը: «Հիմնադրամի հետ համագործակցությունս նախ և առաջ տվեց շատ կարևոր գիտելիքներ՝ բիզնեսը ճիշտ կառուցելու մասին, այնուհետև ֆինանսավորման շնորհիվ ձեռք բերեցի անհրաժեշտ սարքավորումներ՝ արտադրությունը կազմակերպելու համար»,- նշում է գործարար կինը: Խմորեղենի արտադրությամբ զբաղվելու գաղափարն առաջացել է ժամանակի ընթացքում: 2002 թ.-ից սկսած Հասմիկն աշխատել է բանկում՝ որպես վարկային մասնագետ: Մշտապես առնչվել է հրուշակեղենի արտադրության ոլորտի հետ: «Կատարել գործը միշտ բարձր մակարդակով և շարժվել առաջ»՝ ահա Հասմիկի կարգախոսը:

Կին գործարարը կարծում է, որ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է աշխատել քրտնաջան, դժվարություններից չհուսահատվել և համապատասխանել առկա պահանջարկին: Նրա դժվարությունները կապված են հիմնականում արտադրանքի իրացման հետ: «Հատկապես երբ նոր ես սկսում գործը, անհրաժեշտություն է առաջանում գրավել սպառողների վստահությունը, իսկ հետագայում՝ երբեք չկորցնել այն»,- նշում է նա ու հավելում, որ կուզենար, որպեսզի իր նախաձեռնած գործը զարգանա. «Ինձ թվում է կստացվի, քանի որ աշխատում եմ քրտնաջան և մշտապես փորձում եմ առաջ անցնել առկա մրցակցության պայմաններում»,- նշում է կյանքին լավատեսորեն տրամադրված Հ. Հովհաննիսյանը: Իսկ նրանք, ովքեր ցանկանում են սկսել սեփական բիզնեսը, բայց ունեն մտավախությունները, Հասմիկը խորհուրդ է տալիս՝ չվախենալ սկսել և իրագործել դրված նպատակները: «Ոչ մի գործ առանց ջանք գործադրելու գլուխ չի գալիս»,- իր փորձն է կիսում գործարարը:

***www.smednc.am***

# ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

***Որպես շինարարական կազմակերպություն՝ 2012 թ. հիմնադրված «Գրին Լադ» ՍՊԸ-ն երկու տարի անց գյուղատնտեսական ոլորտում սկսել է իրականացնել նաև հակակարկտային ցանցերի, կաթիլային ոռոգման համակարգի, ջերմոցների կառուցման աշխատանքներ:***

Ընկերությունը ուսումնասիրում է նաև հակացրտահարության համաշխարհային փորձը՝ ՀՀ ագրարային ոլորտում ներդրման համար: Այդ գործունեության համար պահանջվում են լուրջ ներդրումներ: Ընկերության գործունեությունը հիմնականում ավտոմատացված է:

«Գրին Լադ» ընկերությունը կատարում է նաև ոռոգման համակարգերի սպասարկում, լանդշաֆտ դիզայն, կանաչ տարածքների հիմնում, լճակների, ջրվեժների կառուցում, բուժիչ պրոֆիլակտիկ սրսկումներ, սիզամարգի հնձում և սնուցում:

ՄԱԿ-ի, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ» բանկի, Իտալական «Պադանո» ֆիրմայի հետ «Գրին Լադ» ընկերության համագործակցումից շահում են գյուղացիական տնտեսությունները: Իտալիայից ներմուծած հակակարկտային ցանցերի 1մ$^2$ արժեքը կազմում է 300-350 դրամ: Համագործակցման արդյունքում, ՄԱԿ-ի միջնորդությամբ՝ ծրագրի շրջանակում գյուղացիներին հնարավորություն է ընձեռնվում այդ ցանցերը ձեռք բերել բավականին մատչելի գնով՝ 160 դրամով:

*ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*

## ՄՐՑՈՒՅԹ

# ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

***Վերջերս Վայոց ձորի Ուրցաձոր համայնքի մշակութային կենտրոնում ամփոփվեցին «Ֆինանսական մասնակցային մոտեցում՝ սոցիալ-տնտեսական զարգացման համար» նախագծի առաջին փուլի արդյունքները: Վեդի ենթաշրջանի 5 համայնքներից (Ուրցաձոր, Շաղափ, Լանջանիստ, Լուսաշող և Զանգակատուն) 130 հոգի մասնակցել էին տարբեր ստեղծագործական մրցույթների. դպրոցականները մասնակցում էին նկարչական, ձեռքի աշխատանքի, իսկ մեծահասակները՝ կարճ շարադրությունների մրցույթի:***

Մրցույթի թեման այսօրվա առաջնահերթ խնդիրներից մեկն էր՝ «Բնություն և մարդ փոխհարաբերություն»: Տարբեր տարիքի 40 մասնակից հաղթել և զանազան նվերներ են ստացել, ինչպես նաև՝ գումարային պարգևատրումներ՝ իրենց աշխատանքներում շոշափելով այս փոխհարաբերության առավել խնդրահարույց կողմերը:

Միջոցառումն ինքնին շատ գունեղ էր՝ կազմակերպված մեծ եռանդով ու խանդավառությամբ, որին մասնակցում էին նաև մի շարք դպրոցականներ: Այն սկսվեց Հ. Թումանյանի հայտնի «Պոչատ աղվեսը» հեքիաթով, որի գործողությունները տեղափոխվել էին ներկայիս ժամանակաշրջան. քննարկվում էր կարևոր մի խնդիր, որն առկա է նաև մեր երկրում, այն է՝ աղտոտված բնություն: Ներկայացմանը հաջորդեց մրցանակների հանձնման արարողությունը: Սա մի մեծ նախագծի դեռևս առաջին փուլն է, որն իրականացվում է Վայոց ձորի մարզում: Այն բաղկացած է 3 փուլից՝ «Անհատ-ընտանիք-համայնք». առաջին փուլում շեշտադրվում է անհատական, երկրորդ փուլում՝ ընտանեկան, իսկ երրորդ փուլում՝ համայնքային մասնակցությունը: Ընտանեկան մասնակցային փուլում, որը տեղի է ունենալու մայիս ամսին, յուրաքանչյուր ընտանիք կարող է ներկայացնել իր բիզնես նախագիծը, որը հնարավորություն կտա ընտանիքին ունենալ հավելյալ եկամտի աղբյուր: Մասնակիցները ստանալու են նախնական որոշակի կապիտալ՝ նախագիծը պատշաճ և գրավիչ կերպով ներկայացնելու համար: Ամեն համայնք կունենա հաղթող ընտանիք, որն էլ կստանա համապատասխան նախնական ֆինանսավորում՝ իր նախագիծը կյանքի կոչելու համար:

Վերջին փուլում մրցույթին մասնակցելու են համայնքները, որտեղ կլինի արդեն մեկ հաղթող: Վերջինս կստանա ֆինանսավորում՝ համայնքային նախագծի իրականացման և համայնքի զարգացման նպատակով: Այս փուլի խորագիրն է՝ «Մեր գյուղը՝ երեկ, այսօր և վաղը...»: Համայնքներն ազատ են ներկայացման ձևի և ընտրության մեջ: Այս նախագիծը համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցելու համար հիանալի գործիք է: Վերջիններիս կենսակերպը սերտորեն կապված է բնական ռեսուրսների օգտագործումից, քանի որ նրանք ապրում են բնության պահպանվող տարածքների հարակից հատվածներում: «Ֆինանսական մասնակցային մոտեցում՝ սոցիալ-տնտեսական զարգացման համար» նախագիծը, օգտագործելով ֆինանսական միջոցները, միավորում է տեղի բնակչությանը, խրախուսում ակտիվ մասնակցությունը և հնարավորություն տալիս մարդկանց պատասխանատու լինել իրենց զարգացման համար: Այս մոտեցումը երկկողմանի հաղթական է՝ ինչպես բնության պահպանության տեսանկյունից, այնպես էլ՝ սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից ելնելով:

Նախագիծն իրականացվում է «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում՝ ֆինանսավորվելով Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից՝ KFW բանկի միջոցով:

***www.armenia.panda.org***

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

# ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ ԵՐԵՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

***Օրերս Վանաձորում կայացավ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի արագ գնահատման և արդյունքների վերլուծության ներկայացում: Գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ծրագիրը ներառել է ՀՀ Լոռու մարզի 55 համայնք՝ ներգրավելով ավելի քան 1000 մասնակից՝ և՛ կանայք, և՛ տղամարդիկ: Կանանց համար անցկացվել է կարողությունների զարգացման, բիզնես, մասնագիտական և այլ 33 դասընթացներ, որոնց մասնակցել է ՀՀ Լոռու մարզի շուրջ 600 կին: Դասընթացներին ներկայացված բիզնես ծրագրերից 38-ը ստացել է դրամաշնորհ՝ նախատեսված 20-ի փոխարեն: Ներկայացված 38 բիզնես ծրագրերից 30-ը սկսնակ ձեռնարկություններ են:***

«Ծրագրի կարևոր արդյունքներից է՝ մասնակիցների ինքնարդյունավետության, ինքնավստահության, ինչպես նաև՝ շուկայում ներկայացվածության, մրցակցային հմտությունների ու շարժունության աճը: Անհրաժեշտ է նշել նաև ծրագրի մուտքը Լոռու մարզի առավել

հեռավոր, «մոռացված», ինչպես օրինակ՝ Ջիլիզա, Մեծավան, Քարինջ և այլ համայնքները, որտեղ, եթե ոչ երբեք, ապա շատ հազվադեպ են հասարակական ծրագրեր իրականացվում»,- նշում է ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

«Ծրագիրն ինձ սովորեցրեց չվախենալ ու չնահանջել: Պետք է լինել նպատակասլաց ու միշտ քայլել առաջ: Ես սկսեցի նոր գաղափարներ մշակել ու հավատալ վաղվա օրվան: Իմ մեջ արթնացավ համայնքի հանդեպ պատասխանատվության զգացումը»,- ասում է ծրագրի շահառու Ասպրամ Ամիրջանյանը, ով Շնող համայնքում, ծրագրի շնորհիվ, սկսել է զբաղվել թռչնաբուծությամբ:

Ինչ վերաբերում է արագ գնահատմանը, ապա այն իրականացվել էր դեռևս 2015թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ՀՀ Լոռու մարզի քաղաքային և գյուղական 13 համայնքում, որոնք հիմնականում հանդիսացել են համախմբերի կենտրոններ: Հիմնական նպատակն էր՝ բացահայտել, թե ծրագիրն ինչ ազդեցություն է ունեցել Լոռու մարզում՝ կանանց սոցիալ-տնտեսական ներուժի ու դրա ընդլայնման հնարավորությունների վրա:

Ծրագրի արագ գնահատմանը և արդյունքների վերլուծության ներկայացմանը հաջորդեց Վանաձոր քաղաքում կայացած «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի Էքսպոն և Աշխատանքի տոնավաճառը: Միջոցառումը նպատակ ուներ ներկայացնելու ծրագրի արդյունքները՝ ի դեմս ծրագրի շրջանակներում դրամաշնորհային աջակցություն ստացած, կանանց կողմից հիմնված և ղեկավարվող բիզնեսների արտադրանքի և ծառայությունների (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Տաշիր, Ախթալա, Շամլուղ, Սպիտակ, Շիրակամուտ, Ջրաշեն, Հարթագյուղ, Ջիլիզա, Քարինջ, Օձուն, Հաղպատ, Արևաշող, Շնող համայնքներ): Նպատակներից մեկն էլ հանրության շրջանում իրազեկման մակարդակը բարձրացնելն էր՝ ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած բիզնես ծրագրերի մասին՝ հնարավորություն տալով համալրել գոյություն ունեցող թափուր աշխատատեղերը: Միաժամանակ կազմակերպվել էր հանդիպում Լոռու մարզում աշխատանք առաջարկող և աշխատանք փնտրող անձանց միջև՝ նպաստելով թափուր աշխատատեղերի շուկայի համալրմանը:

Էքսպոյին և աշխատանքի տոնավաճառին մասնակցում էին ծրագրի շահառուները, ովքեր ներկայացնում էին Լոռու մարզի տարբեր համայնքներ: Նրանցից շատերը սկսել են ընդլայնել իրենց ձեռնարկատիրական գործունեությունը՝ ծրագրի շնորհիվ ձեռք բերելով գիտելիքներ, ինչպես նաև դրամաշնորհ: Կին ձեռներեցները ցուցադրեցին իրենց արտադրանքը և ծառայությունները՝ կիսաֆաբրիկատներ, խմորեղեն, սուրճ, թան, մեղր, արիշտա, ինկուբացիոն ճտեր, կարի արտադրամաս, արծաթյա զարդեր, ներկայացվեցին նաև զբոսաշրջության, առողջապահության և այլ ոլորտներ: Միջոցառման ընթացքում ծրագրի շահառուների կողմից առաջարկվեց թափուր 27 աշխատատեղ:

«Մեր նպատակն է՝ հերթական անգամ ընդգծել կանանց ձեռներեցության զարգացման անհրաժեշտությունը մեր երկրում, խրախուսել ծրագրի շահառու կանանց, ինչպես նաև հանրության հետ կիսվել այնպիսի կարևոր և պահանջված ծրագրի արդյունքների մասին, ինչպիսին է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը»,- նշել է ասոցիացիայի նախագահ Լ. Ասատրյանը: «Առաջին անգամ էի մասնակցում նման ծրագրի: Շատ տպավորված եմ: Կարևոր է, որ այս ծրագիրը հատուկ կանանց համար է և բացում է լայն հեռանկարներ բիզնես ոլորտում: Այս էքսպոն ևս մեկ հնարավորություն է՝ նոր գործընկերներ գտնելու, ինչպես նաև իմ գործունեությունն ու արտադրանքը հասանելի դարձնելու առումով»,- նշում է ծրագրի շահառու Արմենուհի Մամյանը, ով Ախթալա համայնքում, ծրագրի շնորհիվ, վերսկսել է հացի և խմորեղենի արտադրությունը:

Էքսպոն ևս կազմակերպվել էր «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Միջոցառման գործընկերը Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնն է, որն աշխատանքի տոնավաճառ կազմակերպելու մեծ փորձ ունի: Միջոցառումն ուղեկցվեց մշակութային ծրագրով և ծրագրի շահառուների կողմից անցկացվող վարպետության դասերով:

Իսկ ապրիլի 28-ին Երևանում անցկացվեց «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի փակման կոնֆերանսը: Կոնֆերանսի նպատակն էր՝ հանրության լայն շերտերի հետ կիսել ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև անդրադառնալ կանանց ձեռներեցության ոլորտի մարտահրավերներին: «Մենք շարունակում ենք կարևորել կանանց սոցիալ-տնտեսական մասնակցությունը մեր երկրում և շարունակում ենք ծրագրեր իրականացնել այս ուղղությամբ: Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի և ծրագրի շահառու կանանց անունից շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն գործընկերներին, ովքեր մասնակցել ու ներդրում են ունեցել «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի իրականացման գործում: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Եվրոպական Միությանը, առանց որի, այս ծրագիրն իրականություն չէր դառնա»,- նշել է Լիլիթ Ասատրյանը:

Կոնֆերանսին մասնակցում էին պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի՝ ֆինանսական կազմակերպությունների, մասնավոր բիզնեսների, հանրային ոլորտի միջազգային և տեղական հասարակական և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ծրագրի շահառուներ:

«Ծրագրի շրջանակում, ՀԵԿԱ-ի տրամադրած դրամաշնորհի միջոցով, ես կարողացա կազմակերպել կիսաֆաբրիկատների արտադրություն, որտեղ օգտագործվում է միայն տեղական հումք: Նպատակը՝ էկոլոգիապես մաքուր արտադրանք ստանալն է: Իմ նախաձեռնությունը ոգևորել է նաև շրջապատի կանանց, ովքեր նույնպես որոշել են հանդես գալ նոր նախաձեռնություններով: ՀԵԿԱ-ի հետ համագործակցությունը նաև վստահություն է ներշնչում»,- ասում է Մերի Դավթյանը, ով Օձունում կազմակերպել է ընտանեկան բիզնես: Մերին արդեն շուկայի ընդլայնման ծրագրեր է մշակում:

«Կառա և Կարեն» ՍՊԸ-ի (ք. Վանաձոր) հիմնադիր-տնօրեն Կարինե Ղուկասյանի խոսքերով՝ ծրագիրը, դրական առումով, իր մեծ ներգործությունն է ունեցել Լոռու մարզում: Այն հնարավորություն է ընձեռել ընկերությանը նորացնել սարքավորումները, ինչը հնարավոր չէր իրականացնել՝ առանց աջակցության: «Շատ եմ կարևորում տեխնիկայի նորացման և նոր տեխնոլոգիաների մուտքը մեր արտադրամաս: Թեև ձեռքի աշխատանքը փոխարինվել է ավտոմատացված համակարգով, այնուամենայնիվ աշխատողները չեն կորցրել իրենց աշխատանքը, նրանք արտադրամասում հիմա այլ զբաղվածություններ ունեն: Իսկ սարքավորումների շնորհիվ բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը, բարելավվել՝ որակը: Ոգևորված եմ, քանի որ մենք դեռ շատ անելիքներ ունենք»,- հավելում է կին գործարարը:

***Նելլի Սահակյան***

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

## ԴԱՇՏԱՅԻՆ ՕՐ ԼՃԱՇԵՆՈՒՄ

**Վերջերս Գեղարքունիքի մարզի ԳԱՄԿ-ի կողմից անցկացվեց հերթական սեմինար՝ Սևանի տարածաշրջանի Լճաշեն համայնքում:**

Լճաշեն համայնքի ֆերմեր Մարատ Քոլոզյանին պատկանող ցորենի դաշտում տեղի ունեցավ սեմինար՝ «Պայքար մկնանման կրծողների դեմ» Ռադիֆակում Ս պասրաստուկի միջոցով» թեմայով: Սեմինարը վարում էր Սևանի տարածաշրջանի գյուղատնտեսության գծով խորհրդատու Ռադիկ Միլիտոնյանը: Մասնագետը ներկաներին ծանոթացրեց «Ռադիֆակում Ս» պատրաստուկին, բացատրեց և ներկայացրեց օգտագործման կանոնները: Մկնանման կրծողների դեմ պայքարի համար թունավոր գրավչանյութ պատ-

րաստելու համար «Ռադիֆակում Ս» պատրաստուկը խառնում են բարձրորակ սննդային հիմքի հետ: Օրինակ՝ 0,005 % ազդող նյութի պարունակությամբ գրավչանյութի պատրաստման համար անհրաժեշտ է 20 գ «Ռադիֆակում Ս» պատրաստուկը լուծել շատ քիչ քանակությամբ ջրի մեջ, ստացված լուծույթը լցնել 1 կգ սննդային հիմքի վրա և լավ խառնել՝ մինչև լուծույթը հավասարաչափ կբաշխվի գրավչանյութի մեջ: Կպչողականությունը բարձրացնելու համար խորհուրդ է տրվում խառնուրդին ավելացնել բուսական յուղ:

Ռ. Միլիտոնյանը ներկայացրեց նաև անվտանգության կանոնների պահպանման մասին: Պատրաստուկի հետ աշխատանքները պետք է իրականացվեն բաց տարածքներում՝ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործմամբ/դիմակ, ռետինե ձեռնոցներ, ակնոց/: Կրծողները դադարում են ապրել թունավոր գրավչանյութն ընդունելուց 7-11 օրվա ընթացքում:

Սեմինարի ավարտին մասնակիցներին բաժանվեցին «Ռադիֆակում Ս» պատրաստուկի օգտագործման վերաբերյալ խորհրդատվական թերթիկներ:

*Գեղարքունիքի ԳԱՄԿ*

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 26 - մայիս 5, 2016 թ.
թիվ 10 (2098)

## ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# ԽՈԶԵՐԻ ԱՍԿԱՐԻԴՈԶԸ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

***Խոզերի ակարիդոզը հարուցում է բարակ աղիքներում մակաբուծվող, մինչև 40 սմ երկարություն ունեցող կլոր որդը: Ասկարիդոզը տարածված է խոզաբուծությամբ զբաղվող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի հանրապետությունում՝ զգալի խոչընդոտելով ճյուղի զարգացմանը: Հիվանդությունը հաճախ հանդիպում է անհատական ֆերմերային տնտեսություններում: Ասկարիդոզով հիվանդ խոզերը կորցնում են իրենց կենդանի զանգվածի մինչև 30 %-ը, իսկ մատղաշների օրական քաշաճը նվազում է 200 գրամով: Հիվանդների մոտ ընկնում է բնական դիմադրողականությունը, ընկալունակ են դառնում այլ վարակների նկատմամբ և, որ ամենակարևորն է, հիվանդից ստացվում է ցածր սննդային արժեք ունեցող միս:***

Ասկարիդոզի նկատմամբ հատկապես ընկալունակ են մինչև 4 ամսական խոզերը, մեծահասակները լինում են վարակակիր: Խոզանոցների ցածր սանիտարահիգիենիկ պայմանները, կերերում վիտամինների և հանքային աղերի պակասությունը, խիտ պահվածքը նպաստում են հիվանդության տարածմանը: Հարուցչի ձվերը հողում կարող են կենսունակ մնալ մինչև

*Ասկարիդներ*

10 տարի, պահեստային տերերն են հանդիսանում անձրևաորդերը. մարդը նույնպես կարող է վարակվել խոզերի ասկարիդոզի հարուցիչով:

Խոզերի ասկարիդոզի նկատմամբ ապահով տարածքներում հիվանդությունը կանխարգելելու նպատակով, խորհուրդ է տրվում.

*Կենդանիների կերաբաժինը հարստացնել վիտամիններով և հանքային աղերով:

*Ամռան ամիսներին իրականացնել խոզերի ճամբարային պահվածք՝ ճաղավանդակներով առանձնացված հատուկ տարածքներում, 10 օրը մեկ անգամ փոխելով արոտավայրերը:



*Խոզերի ասկարիդների կենսակերպը*

*Յուրաքանչյուր օր մեխանիկորեն հեռացնել գոմաղբը և ենթարկել կենսաջերմային մշակման:

*Խոզանոցների հատակը և ֆերմայամերձ զբոսահրապարակները պետք է լինեն բետոնապատված, մաքրման և ախտահանման համար հարմար:

*Պարբերաբար, մեխանիկորեն մաքրել և լվանալ կերա և ջրամանները, ապահովել մաքուր խմելու ջրով:

*Արգելվում է խոզերին ազատ արածակել ֆերմայամերձ տարածքներում, քանի որ այդտեղ մեծ թիվ են կազմում անձրևաորդերը:

Խոզամայրերի ծնից հետո, մատղաշներին բտման նպատակով խմբավորելուց առաջ, ինչպես նաև կենդանիների սպանդից հետո անասնաշենքերը ենթարկվում են մեխանիկական մաքրման և ախտահանման:

Նոր գնված կենդանիներին պահում են կանխարգելիչ կարանտինում՝ 30 օր տևողությամբ, այսուհետ, հելմինթոլոգիական հետազոտությունից հետո, խառնում են ընդհանուր հոտին:

Կենդանիներին կերակրում կամ ջրում են միայն կերամաններից կամ ջրամաններից:

Յուրաքանչյուր ֆերմայի կամ ամառային ճամբարներում սպասարկող անձնակազմի համար կառուցվում են պետքարաններ:

Արգելվում է խոզերի ազատ զբոսանքը բնակավայրերում կամ աղբավայրերում:

Անապահով տարածքներում խոզերի ասկարիդոզը կանխարգելելու նպատակով, խոզաբուծական տնտեսություններում խոզամայրերին ճիճվաթափում են ծնից մեկ ամիս առաջ և տարեկան երկու անգամ, ճամբարային և մսուրային պահվածքին անցնելուց առաջ, 10 օր անց ստուգում են ճիճվակրության նկատմամբ. հիվանդ կենդանիներ հայտնաբերելու դեպքում, կրկին ճիճվաթափում են:

Խոճկորներին ճիճվաթափում են 14 և 35 օրական հասակում, այնուհետև՝ 3 ամսականում, 10 օր անց ստուգում են ճիճվակրության նկատմամբ. հիվանդ կենդանիներ հայտնաբերելու դեպքում, կրկին ճիճվաթափում են:

Ճիճվաթափությունից հետո գոմաղբը հեռացնում և կատարում են ախտահանություն:

Ճիճվաթափության նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ ճիճվամուղ դեղերը՝ Ալբենդազոլ, Ալբեն, Հելմիցիդ, Լևամիզոլ, Տետրամիզոլ, Իվերմեկտին և այլն:

**Հովհաննես Նաղաշյան**
*ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# ՀՆԱՄԵՆԻ ԲՈՒԺԱՐԱՐ ՈՍՊԸ

***Ոսպը միամյա բույս է, պատկանում է բակլազգիների ընտանիքի միամյա բույսերի ցեղին:***

Հայտնի է մոտ 6 տեսակ: Արմատն իլիկաձև է, թույլ ճյուղավորված: Ոսպի ցողունը չորսկողմանի է, բարակ, կանգուն կամ քիչ թեքված, ճյուղավորվող, թավոտ: Տերևները ձվաձև են կամ գծային: Պսակաթերթիկները սպիտակ են, կապույտ, վարդագույն կամ մանուշակագույն: Պտուղը տափակ է, քիչ ուռուցիկ, մերկ, հասունացումից առաջ՝ մանուշակագույն: Սերմերը տափակ են, ուռուցիկ, խոշոր կամ մանր, 2-9 մմ տրամագծով՝ կանաչ, մոխրագույն, գորշ, շագանակագույն ու սև գույների: Ոսպի սերմի միջուկը հիմնականում նարնջագույն է, հազվադեպ է լինում կանաչ գույնի:

ՀՀ-ում հանդիպում է 3 տեսակի՝ Ոսպ՝ ոսպնյականման, արևելյան և ուտելի. առաջին երկուսը՝ վայրի վիճակում, հանդիպում են Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի մարզերում (մինչև ստորին լեռնային գոտիներ): Աճում են անտառներում, ժայռաճեղքերում, չոր, քարքարոտ լանջերին: Ուտելի ոսպ կարելի է մշակել գրեթե բոլոր գոտիներում:

Ոսպը պարունակում է մեծ քանակությամբ սպիտակուցային նյութեր: Սերմերը պարունակում են վիտամիններ, ճարպայուղեր և միկրոտարրեր: Բժշկության մեջ օգտագործվում են ոսպի սերմերը: Հայկական բժշկության մեջ հաճախ ոսպն օգտագործել են զարկերակային արյան ճնշման բարձրացման, մաշկային ցաների, նշիկների բորբոքումների, կերակրափողի խոցերի, հազի, խոցերի, աչքի, ականջի բորբոքումների, աչքի սպիտակափառության,

ոսկրացավի, լյարդի հիվանդությունների, մարսողական ուղու բորբոքումների բուժման համար:

Ոսպը հնագույն մշակաբույսերից մեկն է: Այն մշակվել է դեռևս նեոլիթի ժամանակաշրջանից: Ոսպի մշակումը մեծապես նպաստել է Պատմական Հայաստանի նախահայկական ցեղերի քաղաքակրթության զարգացմանը: ՀՀ սահմաններում ոսպի մշակության բարձր մակարդակի մասին են վկայում Կարմիր բլուր բնակավայրում կատարված պեղումները: Բույսը բազմիցս հիշատակվում է Հին Կտակարանում:

19-րդ դարի սկզբից սկսած ոսպը խոշոր ծավալներով մշակվել է Ռուսաստանում և արտահանվել, այստեղ է բուծվել ձկնկիթ հիշեցնող փոքր, կլոր, սև հատիկներ ունեցող «Բելուգա» տեսակը:

21-րդ դարի սկզբում հիմնական արտահանող երկրներն են Հնդկաստանը և Կանադան, որոնք մշակում են մոտավորապես նույն քանակի ոսպ:

Բնական պայմաններում ոսպի շուրջ 5-6 տեսակներ հանդիպում են Միջերկրական ծովի մերձափնյա տարածքներում, Փոքր Ասիայում, 2 տեսակ՝ Կովկասում և Ղրիմում: Ոսպի գիտական անվանումը Lens է. բառն ունի նաև «լինզա» իմաստը: Նույնանման համապատասխանություն կա նաև հունարեն, չեխերեն և հայերեն լեզուներում: Տարբերում են մանրահատիկ և խոշորահատիկ տեսակները: Մանրահատիկ ենթատեսակն ավելի ցածրաճ է, սակայն աչքի է ընկնում բարձր բերքատվությամբ: Կանաչ, գորշագույն սերմերը ունեն ընկույզը հիշեցնող համ: Ոսպը հարմարվում է կլիմայական պայմաններին՝ orientalis ենթատեսակն երաշտադիմացկուն և ջերմասեր է, վախենում է գարնանային ցրտահարություններից:

Հին Հռոմում ոսպն օգտագործել են ստամոքսի և նյարդային համակարգի հիվանդությունների բուժման համար: Վաղուց ի վեր նկատել են, որ ոսպի կանոնավոր օգտագործումը հանգստացնում է նյարդերը: Ռուսաստանում բույսի պատրաստուկներով բուժել են ծաղկախտը: Սերմի եփուկն օգտագործել են փորկապության, երիկամաքարային, լյարդի հիվանդությունների դեպքում:

Ամփոփելով տարբեր երկրներում կատարված ուսումնասիրությունները՝ սննդաբանները կազմել են այն մթերքների ցուցակը, որոնք օգնում են ժամանակակից մարդուն խուսափելու դեպրեսիայից, սթրեսներից, նաև պարգևում երկարակեցություն: Այս ցուցակի մեջ են մտնում ոսպը, ցորենի հացը, հնդկացորենից պատրաստված ճապոնական արիշտան, բրինձը, սպիտակ պանիրը, կարմիր կծու պղպեղը, կարմիր լոբին, լոլիկի մածուկը և աջիգան, սխտորը, կաթնաշոռը՝ մեղրի հետ, կիտրոնը, շամպինիոնը, ավոկադոյի և սառը զտման ձիթապտղի յուղերը, մածունը, սոյայի սոուսը, պաքսիմատը, ցորենի թեփով պատրաստված մթերքը, ընկուզեղենը:

Ոսպի սննդարար արժեքը բավականին բարձր է՝ 35 տոկոս սպիտակուցներ, 50 տոկոս ածխաջրեր, 2,5 տոկոս ճարպեր: Հում մթերքի կալորիականությունը 340 կկալ է, եփելու ընթացքում այն կարող է նվազել մինչև 105 կկալ:

***Լիլիթ Գասպարյան***

## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

### ՀԻՄԱԼԱՅԱՆ ԱՂԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***Ամենաարժեքավոր սննդային հավելումը՝ հիմալայան աղն ամենաառողջարարն ու մաքուրն է ամբողջ աշխարհում:*** Այն հազվագյուտ թանկարժեք համարվել է դեռևս հնագույն ժամանակներից, երբ հիմալայան աղով առևտուր են արել, նույնիսկ, հին հռոմեացիները:

Հիմալայան աղն արյան

բարձր ճնշում չի ստեղծում՝ ի տարբերություն սովորական աղերի, այն չի մեծացնում կալիումի և նատրիումի հարաբերությունը արյան մեջ, հարուստ է 84 բաղադրիչով, որոնք առկա են մարդու օրգանիզմում, այդ իսկ պատճառով, այն օրգանիզմն ապահովում է կենսականորեն անհրաժեշտ վիտամիններով և հանքային տարրերով:

Հիմալայան լեռներում ավելի քան 250 մլն տարի առաջ ի հայտ եկած աղի օգտակար հատկություններն են՝

- ✓ կարգավորում է էլեկտրոլիտների և ջրի մակարդակն օրգանիզմում:
- ✓ Կարգավորում է արյան մեջ շաքարի մակարդակն ու կանխում շաքարախտը:
- ✓ Օգնում է կարգավորել մարսողությունն ու նյութափոխանակությունը:
- ✓ Ամրացնում է ոսկրերը՝ հատկապես երեխաների մոտ:
- ✓ Կանխում է վաղաժամ ծերացումը:
- ✓ Կարելի օգտագործել ինհալացիայի համար՝ կոկորդի բորբոքման, բրոնխիալ ասթմայի ժամանակ:
- ✓ Նպաստում է շնչառական ուղիների առողջությանը:
- ✓ Բարելավում է արյան շրջանառությունը:
- ✓ Նպաստում է արյան մաքրմանը:
- ✓ Կարգավորում է լյարդի և երիկամների աշխատանքը:
- ✓ Կարգավորում է օրգանիզմի էներգետիկ պաշարը՝ նպաստելով դրական տրամադրության ստեղծմանը:
- ✓ Կանխում է մկանային ցավերը:

Հիմալայան աղը կողմնակի, բացասական ազդեցություն չունի և չի վնասում ստամոքսի կամ երիկամների գործառույթներին:

### ՄԻ ՔԱՆԻ ՓԱՍՏ ՎԻՏԱՄԻՆ C-Ի ՄԱՍԻՆ

***Շատերը C վիտամինի մասին գիտեն, որ այն պարունակում է ցիտրուսներում, և դրա անբավարությունը կարող է խախտել օրգանիզմի աշխատանքը: Սակայն քչերը գիտեն, թե ինչ է իրենից ներկայացնում այդ վիտամինը:***

C վիտամինն օգնում է

մրսածության ժամանակ: Սա շատ տարածված միֆ է: Վարակը բուժել կամ կանխել C վիտամինի օգնությամբ հնարավոր չէ: Ուղղակի այն նպաստում է դիմադրողականության բարձրացմանը:

C վիտամինի անբավարար շատ հազվադեպ է պատահում: Սա թերևս ճիշտ է. օրգանիզմը չի արտադրում վիտամին C, ինչի ամբողջ պաշարը մենք ստանում ենք սննդից: Կանանց համար օրական չափաբաժինը 75 մգ է, իսկ տղամարդկանց համար՝ 90 մգ: Միջին նարինջը պարունակում է 70 մգ վիտամին: Լուրջ խնդիրներ կարող են առաջանալ, եթե մարդն օգտագործում է 10 մգ-ից պակաս քանակություն:

Ցիտրուսները C վիտամինի լավագույն աղբյուր են: Սա այնքան էլ ճիշտ չէ: Ամենաշատ C վիտամին պարունակում է քաղցր պղպեղը, բրոկոլին, կիվին և ելակը: C վիտամինն օգնում է պայքարել ճարպակալության դեմ: Սա ճիշտ է: Հետազոտությունները ցույց են տվել, որ C վիտամինի անբավարարությունը կապված է ճարպակալման հետ:

C վիտամինը «շատ չի լինում»: Շատերը վստահ են, որ C վիտամինի ավելցուկն անվնաս է: Սակայն, դա այդպես չէ: Եթե C վիտամինի քանակն օրական անցնում է 2000 մգ-ից, ապա այն վտանգավոր է: Ընդունեք չափավոր քանակությամբ, իսկ օրգանիզմն անպայման կարձագանքի:

### ՄԹԵՐՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՐՈՒՍՏ ԵՆ ՅՈԴՈՎ

***Յոդի պակասը կարող է առաջացնել շատ առողջական խնդիրներ, որոնք հաճախ վերագրում ենք գերհոգնածությանը, անքնությանը և այլն:***

Սակայն այնպիսի ախտանշանները, ինչպիսիք են՝ մշտական թուլությունը, մոռացկոտությունը, քնկոտությունը, մանրուքներից գրգռվա-

ծությունը, հաստատ վկայում են, որ օրգանիզմում յոդի պակաս կա: Սակայն այդ պակասը կարելի է լրացնել ճիշտ սննդակարգով: Ստորև ներկայացնում ենք մթերքներ, որոնք հարուստ են յոդով:

Յոդով հատկապես հարուստ են ծովամթերքները՝ ոստրեներ, խխունջներ, ծովային կաղամբ, խեցգետիններ և այլն: Յոդի անսպառ աղբյուր է ճարպոտ տեսակների ծովաձուկը:

Քաղցրահամ ջրերում ապրող ձկները ևս հարուստ են յոդով: Յոդի պակասը կարելի է համալրել նաև ձկան յուղով: Կարմիր ձկնկիթն օգնում է յուրացնել յոդը: Սևապտուղ արոսը նույնպես մեծ քանակությամբ յոդ է պարունակում:

### ՄԱՅԻՍԻ 3-Ը՝ ԱՐԵՎԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

***Արևը Երկրին ամենամոտ գտնվող աստղն է:***

Երկրի համար Արևը տիեզերական էներգիայի հզոր աղբյուր է: Այն բուսական և կենդանական աշխարհին անհրաժեշտ լույս և ջերմություն է տալիս, նաև ձևավորում Երկրի մթնոլորտի կարևորագույն հատկությունները: Ընդհանուր առմամբ, Արևը սահմանում է մոլորակի էկոլոգիան: Առանց դրա չէր լինի կյանքի համար անհրաժեշտ օդը. այն սառած ջրերի և սառցակալած հողի շուրջը գտնվող հեղուկ ազոտային օվկիանոսի կվերածվեր: Երկրի վրա ապրողներիս համար, Արևի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ նրա մոտ է ծագել մեր մոլորակը, և նրա վրա է առաջացել կյանքը: Արևը, քամին, օվկիանոսի ալիքները և կենսազանգվածը էներգիայի հումք են, որոնք շրջապատում են մեզ և հեշտ է այն օգտագործել:

Անհրաժեշտություն չկա այն հանել գետնի տակից, չի հանգեցնում ռադիոակտիվ թափոնների ձևավորմանը, իսկ թունավոր նյութեր ընդհարապես չի արտադրում: Այն վերականգնվող էներգիա է: Էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառման հնարավորություններին ուշադրություն հրավիրելու նպատակով, Արևային էներգիայի միջազգային կազմակերպության Եվրոպական գրասենյակը (ISES-Europe), 1994 թվականից սկսած, ամենամյա Արևի օր է կազմակերպում՝ կամավորական հիմքերով:

Ամբողջ Եվրոպայով մեկ մասնագետները, հասարակական կազմակերպությունները և ընկերությունները տարբեր բնույթի միջոցառումներ են կազմակերպում՝ ցուցադրելու արևային էներգիայի հնարավորությունները:

**Նյութերը՝ համացանցից**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Հարգելի քաղաքացիներ,***

**Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:**

**Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:**

**ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2016 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

| «ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ | «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր |
|---|---|
| 1 համարի գինը՝ 120 դրամ | 1 համարի գինը՝ 1350 դրամ |
| 6 ամսվանը՝ 1980 դրամ | 6 ամսվանը՝ 4050 դրամ |
| 1 տարվանը՝ 3960 դրամ | 1 տարվանը՝ 8100 դրամ |

Բաժանորդագրությունը իրականացնում են՝

*Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները*

*«Հայփոստ»,*

*«Հայմամուլ»,*

*«Պրես-Ատտաշե»*

*կազմակերպությունները*

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 34
ստորագրված է տպագրության 04.05.2016 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա